ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու, ապացույց պահանջելու և դատական նիստ նշանակելու մասին

ԵԴ2/3307/02/24 քաղաք Երևան
10 Մայիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արտուշ Ավագյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/3307/02/24 քաղաքացիական գործով ըստ հայցի «Իվաֆարմ» ՍՊԸ-ի ընդդեմ «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի՝ «Իվաֆարմ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Երեւան» բժշկագիտական կենտրոն ՓԲ ընկերության տնօրենի 28 մարտի 2024թ N 5/17-120 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու մասին հարցը

ՊԱՐԶԵՑ

«Իվաֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի՝ «Իվաֆարմ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Երեւան» բժշկագիտական կենտրոն ՓԲ ընկերության տնօրենի 28 մարտի 2024թ N 5/17-120 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Հայցադիմումն էլեկտրոնային եղանակով մուտքագրվել է 28.04.2024թ.-ին, իսկ դատավոր Արտուշ Ավագյանին մակագրվել է 30.04.2024թ.-ին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Առաջին ատյանի դատարանը վարույթ է ընդունում ներկայացված հայցադիմումը, եթե

առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանները հատուկ հայցային վարույթներն իրականացնում են սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն ենթաբաժնի դրույթներով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:
Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:
Դատարանը, ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, արձանագրում է, որ այն վերադարձնելու կամ ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն և գտնում է, որ այն ենթակա է վարույթ ընդունման և հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով գնումների հետ կապված վեճերով վարույթների համար նախատեսված առանձնահատկությունները, Դատարանը գտնում է նաև, որ միաժամանակ անհրաժեշտ է Պատասխանողից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ապացույցները:
Անդրադառնալով գործը դատական նիստում քննելու հարցին, դատարանն արձանագրում է, որ հայցադիմումին կից ներկայացվել է նաև միջնորդություն՝ գործը դատական նիստում քննելու մասին, ինչպիսի հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է նշանակել դատական նիստ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 201-րդ, 202-րդ, 234.5-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑ

1. «Իվաֆարմ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի՝ «Իվաֆարմ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Երեւան» բժշկագիտական կենտրոն ՓԲ ընկերության տնօրենի 28 մարտի 2024թ N 5/17-120 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
2. Գործը քննել հատուկ հայցային վարույթի կարգով:
3. Պատասխանող «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ից պահանջել ԵԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/5 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված վերջինիս տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
4. Որոշման նախորդ՝ 3-րդ, կետում նշված ապացույցները պատասխանողի կողմից պետք է ներկայացվեն սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Գործը քննել դատական նիստում, այն նշանակել՝ 21.06.2024թ. ժամը 17:15-ին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիր նստավայրում՝ ք.Երևան, Հրաչյա Ներսիսյան 10 հասցեում, թիվ 10 դատական նիստերի դահլիճում:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արտուշ Ավագյան

Digitally signed by
ARTUSH AVAGYAN 2601940050
Date: 2024.05.13 17:52:41 mID

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am